



SEF INTERNATIONAL

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնը: ՎԱՐԿԱՅԻՆ ՄԱՄՆԱԳԵՏ («Մեղրի» մասնաձյուղ)

Աշխատանքի վայրը: Ք. Մեղրի

Աշխատանքի նկարագիր

Կազմակերպության վարկավորման ծառայությունների ապահովում, սեփական պորտֆելի արդյունավետ կառավարում և նախանշված ծավալների ապահովում:

Վարկային մասնագետի հիմնական աշխատանքային պարտականություններն են

- Կազմակերպության կողմից առաջարկվող վարկատեսակների վերաբերյալ պոտենցիալ հաճախորդների տեղեկացվածության ապահովումը
- Նոր հաճախորդների ներգրավում
- Հաճախորդի վարկային պահանջի և փաստաթղթերի վերլուծությունը
- Վարկառուի հետվճարումների ապահովումը համաձայն պայմանագրի
- Վարկային ռիսկերի վերլուծություն և գնահատում
- Հաճախորդների արհեստավարժ սպասարկումը
- Շուկայի ուսումնասիրություն բիզնես և/կամ գյուղատնտեսական վարկերի գծով
- Խնդիրների բացահայտում և լուծումների առաջարկում

Պահանջվող մասնագիտական գիտելիքները և աշխատանքային փորձը

- Բարձրագույն կրթությունը տնտեսագիտության կամ ճշգրիտ գիտությունների բնագավառում
- Վերլուծական կարողություններ
- MS Office ծրագրային փաթեթի իմացություն (Word, Excel)
- AS Bank համակարգի իմացությունը առավելություն է
- Արդյունավետ բանակցելու և հաղորդակցվելու հմտություն
- Թիմային աշխատելաոճ
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացությունը ցանկալի է

Այլ աշխատանքային պայմաններ

Աշխատանքն իրականացվում է գրասենյակային պայմաններում՝ հաճախակի այցելություններով հաճախորդներին:

Դիմելու կարգը

Ցանկացողները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները cvmeghri@sef.am էլեկտրոնային հասցեին, հարցերի դեպքում կարող եք զանգահարել՝ (37410)202822 հեռախոսահամարին:

Խնդրում ենք նամակի վերնագրում նշել՝ Վարկային մասնագետ և նշել մասնաձյուղը:
Ինքնակենսագրությունների ընդունման վերջնաժամկետն է **01 մարտի 2018թ.:**